

ՄԱՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցւում.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է կանոնաւորել.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Սովետների օգտին. ձեռք թելը. Նամակ Մօսկ-
վայից. Նամակ Ստամբուլից. Ներքին լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լուրեր Ստամբուլից.
Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՌԻՐ-
ՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Ֆրէսկէան կոնգրէս.

ՊԵՏԻ Ե ԿԱՆՕՆԱԴՐՈՒՄԸ

Ներկայ տարիներէն ի վեր Կ. Պոլսում
պատահել է մի դէպք, որ բաւական մեծ
կարեւորութիւն է ստացել թէ Կ. Պոլսի
մամուլի և թէ հասարակութեան մէջ:—
Մի բժիշկ, Մինէճեան անունով, մօտ 15
տարի է, որ աշխատում է ապահարգան
ձեռք բերել և կրկին ամուսնանալու հը-
րաման ստանալ: Ներկայ տարիներ նրան
այդ չէր աջակցում, չորհրդէն այն հանգա-
մանքի, որ Պոլսի պատրիարքարանը ամուս-
նաւորութեան վերաբերեալ չունի մի որոշ,
մշակված օրէնսդրութիւն: Վերջապէս նա
զինում է այն բարձր ինստանցիային, որի
վճիռը՝ եկեղեցու կանօնական օրէնքի
համաձայն, վերջնական է համարվում, այն
է իշխանին կաթողիկոսին: Կաթողիկոսը
լուծում է բժիշկ Մինէճեանի ամուսնական
պատկը և կրկին ամուսնանալու հրաման է
տալիս: Սակայն, երբ Մինէճեան ներկայաց-
նում է կաթողիկոսական այդ վերջնական
վճիռը Կ. Պոլսի պատրիարքարանին, կրօնա-
կան ժողովը մերժում է կատարել վճիռը,
առարկելով թէ Կաթողիկոսը չէ պահան-
ջել պատրիարքարանից տեղեկագիր և իր
վճիռը արձանակելու աչքի առաջ չէ ունե-
ցել մանրամասնութիւնները:

Մենք այստեղ չենք մտնում այն հարցի
քննադատութեան մէջ, թէ որքան օրինա-
ւոր է և զիսկալիկապէս կանօնների համա-
ձայն Պոլսի պատրիարքարանի այդ վար-

մունքը: Մենք կամենում ենք շեշտել իր-
դութեան պատճառի վրա:

Եթէ Պոլսի կրօնական ժողովը փորձում
է կանօնները կաթողիկոսի վճիռը դրժա-
րութիւնը, դրա զիստաւոր պատճառն այն
է, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքարա-
նը կամ կրօնական ժողովը մինչև այսօր
չունի մի որոշ, մշակված կանօնադրութիւն
ամուսնաւորութեան և առհասարակ ա-
մուսնական խնդրի մասին:

ձեռնարկ է, կան զանազան կանօններ,
որ թողել են մեզ եկեղեցու նախկին
հայրերը և բազմաթիւ եկեղեցական ժողով-
ները, բայց դրանց բոլորի վճիռները, սահ-
մանաւ կանօնները այնքան մութ են, անօ-
րոշ, միմեանց հակասող, որ աւելի կնճա-
տում են խնդիրը, քան թէ լուսաբանում:
Եւ վերջապէս այդ կանօնները սահմանված
են այնպիսի ժամանակի, երբ կանօնը
մէջ ապահարգանքի հարցը մի հազա-
րէտ երեւոյթ էր կազմում և համարեա
պէտք չէր լինում դիմել եկեղեցու միջա-
մուսնական և դատաստանին: Եւ մինչդեռ
այդ միջնադարեան կանօնները մնացել են
անփոփոխ, կանօնը առաջ մղելով իր զար-
գացումը իր անողորմ պահանջները, արմա-
տական փոփոխութիւն է կրել:

Ամեն օրէնսդրութեան, լինի նա եկեղե-
ցական, թէ քաղաքացիական, զիստաւոր նը-
պատակն է կանօնաւորել հասարակութեան
յարաբերութիւնները, որոշել հասարակու-
թեան, պետութեան և եկեղեցու իրաւունք-
ները: Այդ կանօնադրութիւնը անհրաժեշտ
է հասարակական կեանքի բարօրութեան,
մարդկային թէ հաւաքական և թէ ան-
հատական երջանկութեան համար: Բայց
այդ նպատակը կարող է իրագործվել միայն
այն ժամանակ, երբ նկատողութեան տակ
յայտնի ժամանակի հասարակական կեան-
քի պայմանները: Քանի որ հասարա-
կութեան, ժողովրդի կեանքի պայմանները
փոխվում են ժամանակի հետ միասին, դրա

հետ միասին փոխվում են և կեանքի պա-
հանջները.— հետևաբար օրէնսդրութիւնը
ևս պէտք է փոխվի, բարեփոխվի, կատարե-
լագործվի, ժամանակի պահանջների փոխ-
խութեան համեմատ:

Եւ մինչ ամբողջ դարերի ընթացքում
հայոց եկեղեցու ամուսնաւորութեան վե-
րաբերեալ կանօնները, այն ևս խիստ անօ-
րոշ և մութ կանօնները, մնացել են ան-
փոփոխ, երբէք չեն յարմարվել ժամանակի
և կեանքի պահանջներին ու փոփոխու-
թիւններին, ժողովրդի կեանքը կրել է ան-
արժանաբար ահազին փոփոխութիւն և
առաջ են եկել այժմ այդ պահանջներ, այլ
կարեքներ, այլ աշխարհայեցողութիւն: Եւ
պարզ է, որ պէտք է ունենալ ժողովրդի
կեանքի ներկայ պահանջներին համապա-
տասխան օրէնսդրութիւն, պարզ, որոշ
մշակված և տարածայնութիւնների առիթ
չը տուող:

Այդպիսի օրէնսդրութիւն չունենալու
պատճառով հարկաւոր ամուսնական հար-
ցեր ամբողջ տարիներով մնում են չը լուծ-
ված, բազմաթիւ ընտանիքների դժբաղդու-
թեան պատճառ ևս դառնում, զանազան
կամայականութիւնների, զեղծումների հա-
մար լայն ասպարէզ են բացում: Ցանկա-
կալիքով մարդիկ դատ են վարում, ա-
րիւն քրտինք են թափում, նիւթական և
բարդական մեծ զոհաբերութիւններ են
կրում և դարձեալ խնդիր որ և է լուծում
չէ դանում:

Ամբողջ 15 տարի չարչարվելուց յետոյ
մի բժիշկ Մինէճեան, երբ կարծում էր, թէ
խնդիրը այլ ևս վերջացած է, ահա մի նոր
արդեւթի է հանդիպում՝ կրօնական ժողովի
նոր առարկութեան, և ով դիտէ, թէ դեռ
չէլ քանի տարիներ պէտք է չարչարվի:

Եւ այդ բոլորի պատճառն այն է, կրկնում
ենք, որ Կ. Պոլսի պատրիարքարանում,
թիւրքաց հայերի այդ կրօնական-կարգական
կենտրոնում, չը կայ մի որոշ, մշակված կա-

նօնադրութիւն, որով կարողանային ղեկա-
վարվել եկեղեցական ատենաները, առանց
կամայականութիւն գործ դնելու, առանց
որ և է պարզ խնդիր տարիներով ձգձգելու:
Ներկայ դէպքը.—մի փառաւոր ապա-
ցոյց է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎԵՏԱՆԵՐԻ ՕՐՏԻՆ

Ստացանք թիւրքաց Հայաստանի, Երևանի ու
Կարսի նահանգների սովետների օգտին.

1) Հայ դ ար ա դ ր ց, Հնդկաստան, Գ. Ս.
Ս. Աղաթանից 200 ֆրանկ, հետեւեալ նամակով.
«Սոյն գումարից 180 ֆրանկ հաճեցեք ուղարկել
Վեհափառին, իսկ մնացած 20 ֆրանկը յօգուտ
անմահ Գրիգոր Արծրունու արձանի և գրուս-
ծոց հրատարակութեան:—Սոյն գումարից 180
ֆրանկն նուիրած է իտալացի Monsieur Lazarus
Paul, իսկ 20 ֆրանկ իմ կողմից է հատ ցաւալի
է, որ տեղս ոչ մի հայ չը գտնվելու ստիպվե-
ցայ դիմել իմ օտարազգի բարեկամին, որը և
մարդասիրաբար ընդունեց խնդիրս: Կ. Պոլսոյ և
կաթողիկոսի փարթամ հայրն թող օրինակ առ-
նեն սոյն օտարազգի պարօնից և փութան օգ-
նել իրանց սոված եղբայրներին... Ընթացիկ
կուրսով 200 ֆրանկի հաշւին բանկից ստացանք
73 ր. 40 կոպեկ: Դրանից 66 ռուբլի 36 կոպեկը
սովետների օգտին է, իսկ 7 ր. 34 կոպեկ Գրիգոր
Արծրունու գրուածքների և արձանի համար:

2) Բաւ խ ա ն ի ի յ, Սմառ Տէր-Գրիգորեանի
միջոցով 21 ռուբլի, որը հանգանակված է Թու-
մայեան և ընկ. նախահանգների գործակալատաների
և բանտների մէջ, հայրենիք վերադարձող դադ-
թականների օգտին:

3) Բա գ ո լ ի յ, Է. Փրբուդաղեանից 7 ռուբ-
լի, կաթողիկոսին ուղարկելու համար:

4) Բա գ ո լ ի յ, իմ ժեներ Բեղրամեանից 10
ռուբլի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖՐԵՍԻԷԼԵԱՆԿՈՒԹՅԱՆ ԿՕՆԳՐԵՍՍ

(Նամակ Եվեյարիայից)

Մի քանի օր սրանից առաջ Նեոպոլիտէ քաղա-
քում տեղի ունեցաւ ֆրեզելեան կոնգրէս:

Ֆրէսկէան մանկական պարտէզները, որ այժմ
մուտք են գործում Եվեյարիայի իւրաքանչիւր մի
անկիւն, իրանց դպրութեան սկզբներում, ինչպէս
առհասարակ ամեն մի նոր դպրոց, հանդիպելին
մանկական խոչընդոտներին և արգելքներին: Եւ
Ֆրէսկէան իր սխառմել իրագործելու համար ան-
չափ դժուարութիւններ կրեց, անչափ ծաղր և
ծանախ կրեց իր ժամանակակիցներէն: «Մեր խնե-
թը».—այդպէս էին անուանում նրան իր համա-
գիւղացիք.—տարաւ այդ բոլորը համբերութեամբ
յուսալով, որ մի օր իր գաղափարներն աւելի
մշակված հող կը գտնեն, արմատ կը գցեն, կը
ծին, կը ծաղկեն և կը տան ցանկալի պտուղը:
Նա չը սխալվէր: Նրա մտքերը հասունացան,
զոտան բարձրութիւ հետեւողներ, մանաւանդ գերմա-
նական Եվեյարիայում: Այդտեղ նրա հետեւող-
ներն էլ, թէ ծաղրի առարկայ դարձան, բայց
տոկունութեամբ գործը առաջ տարան: Ժողո-
վորդը տեսաւ այդ գործի բարի արդիւնքը, և այն
ժամանակ միայն սկսեց խրախուսել մանուկների
այդ իսկական ընկեր.—բարեկամներին: Կազմա-
կերպվում են ընկերութիւններ Ֆրէսկէի անու-
նով, հիմնվում են «պարտէզներ», տեղի են ունե-
նում ժողովներ, կոնգրէսներ, վիճում, պարզում
են, բացատրում ծրագրի մութ կէտերը, հաղոր-

դում միմեանց իրանց արած նկատողութիւնները,
փորձերը: Արհամարհանքի և ծաղրի տակ ծնունդ
առած գործը պաշտպանութիւն է դառնում հասա-
րակութեան կողմից, սկսում է աւելի ամուր, ա-
ւելի վստահ քայլերով առաջ գնալ: Կանտօնական
կառավարութիւնները ևս աջակից են հանդիսա-
նում նրան և նրանցից շատերը իրանց ձեռքի
տակն են առնում ժողովրդական կրթութեան
այդ ձևերը ևս:

Մանկական պարտէզները այժմ սփռվում են
գերմանական Եվեյարիայի բոլոր տեղերում: մա-
նաւանդ աչքի է ընկնում Բազել կանտօնը, որի
մանկական պարտէզների թիւը 40 է, սաներ,
սանուհիները.—մօտ 2600: Աչքի առաջ ունեցե՛ք
այդ կանտօնի բնակիչներին թիւը—130,000: Նը-
կատենք ի միջի այլոց, որ այդ կանտօնի պար-
տէզները վարժուհիների կամ ինչպէս նրանց ա-
նուանում են՝ «պարտէզպանուհիներ» տարեկան
աւճիկը 1500—2000 ֆրանկ է (մօտ 600—800
րուբլի): Գերմանական Եվեյարիայից այդ պար-
տէզները մուտք են գործում Եվեյարիայի ֆրան-
սիական մասը: Այստեղ աւալին տեղի է բռնում
ժընճի կանտօնը, ապա Նեոպոլիտէ:

Այնքանք այժմ կոնգրէսին. Ֆրէսկէան կոնգրէս-
ները գումարվում են իւրաքանչիւր երկու տարի մի
անգամ: Այս տարվանը թուր վեցերորդն է և այս
առաջին անգամն է, որ նա տեղի է ունենում ֆո-
մանական Եվեյարիայում: Ընտրելով Նեոպոլիտէ
լիւրն VI կոնգրէսի գումարման տեղ, կոնգրէսիստ-
ները նպատակն էր աւելի զարկ տալ մանկական
պարտէզների տարածման գործին Եվեյարիայի
այս մասում:

Սեպտեմբերի 9-ին և 10-ին, Նեոպոլիտէ ակա-
դեմիան, ուր տեղի պէտք է ունենար կոնգրէսը,
զարդարված էր դրօշակներով և բուսականու-

թեամբ: Մենք ևս շտաբի նման գնացել էինք
այդ կոնգրէսը: Մասնում էք այդ շինութեան
մէջ. նրա երկար ու ձիգ կորիզներում ի ցոյց
են դրած Նեոպոլիտէ կանտօնի բոլոր մանկական
պարտէզների աշխատանքները. վերջիններս մօտ
դրած էին Ֆրէսկէի լուսանկարը և նրա կենսա-
դրութեանը և գործունէութեանը վերաբերեալ մի
քանի բնօրինակ: Ակադեմիայի դաւթի ձախտին
դրած էր ֆրանսիական չորս տողից մի օտանաւոր,
որ մենք այստեղ առաջ ենք բերում արձակ
թարգմանութեամբ. «Այդպէս ձայներ, մանկական
ձայներ, ձայներ ջննջ, անարատ բերկրութեան,
ձայներ և ծնողաց, ողջունեցե՛ք այս բարեկամնե-
րին. սրանք նուիրում են իրանց արուեստը, ի-
րանց խնամքը և իրանց գործը փայլեցնելու, ո-
րոնց ընդունեց և օրհնեց Քրիստոսը: Ակտում էք
պտտել այդ դարդարած երկար սեղանների շուր-
ջը: Խրաքանչիւր գիւղ, իւրաքանչիւր համայնք
ունի իր առանձին բաժինը: Այդտեղ կան զանա-
զան ձևի և տեսակի աշխատանքներ. այդ աշխա-
տանք.—խաղալիքներ նայելիս դուք իսկոյն նը-
մարում էք մանկան դեռ անվարժ և անհաստատ
ձեռքը: Այդտեղ կային և կարողօնի վրա թելով
շինած զանազան ձևեր, հաստ թղթից պատրաս-
տած լամպի օբաթուներ, այցետոմսերի աման,
կարտօնների յուլունքներով նախած, զանազան
օղակներ, մատիտով քմաքմած հասարակ օրինակ-
ներ, և այլն, և այլն: Ժողովուրդը խաւոված նա-
յում, դիտում է փոքրիկների ձեռքի այդ ար-
դիւնքը:

Յուզանդիսի զեղեցիկ տղաւորութեան տակ
մտնում էք ակադեմիայի Aula սոված մեծ դահ-
լիճը, որն արդէն լի էր խուռն բազմութեամբ,
մեծ մասը.—կանայք: Այդտեղ էին ի միջի այլոց,

Եվեյարիայի զանազան կողմերից եկած 200 վար-
ժուհի.—պարտէզպանուհիները: Ամբիօնի մօտ գե-
տեղված էին կոնգրէսի բերօն և երկու թարգ-
մանիչներ՝ մէկը ֆրանսերէնի, միւսը գերմանե-
րէնի համար: Նխաղից առաջ քաղաքի մի երգե-
ցիկ խումբ երգում է երկու տղային երգ: Ապա
կոնգրէսի նախագահը նիստը բացում է մի գեղե-
ցիկ և աղբււ ձառով: Նա գովում է Ֆրէսկէան
ընկերութեան եռանդը, որի չորհուրդն ամսական
պարտէզները տարածված են Բազելից մինչև
Սան-Վալ, Լիւսերնից մինչև Յիւրիխ և Վինտեր-
թուր: Նախագահը յիշեցնում է Ֆրէսկէի կեանքի
դժնդակ անպարէզը: Ո՛րքան լավատու որ կը լինէր
նա՛ այդ «ծեր խեղճը», եթէ այսօր դար տեսնէր,
որ այն գաղափարը, որին նա նուիրում էր իր բոլոր
ոյժերը և որի համար մաշում իր կեանքը, օր օրի
վրա աւելի և աւելի կողմնակիցներ է դառնում: Այդ
ձառն ընդունվում է բուռն ծափահարութեամբ և
խալոյն թարգմանվում գերմաներէնի:

Թարգմանութիւնից յետոյ ամբիօնի մօտ տեղ
է բռնում օր. Վիլյամս, Նեոպոլիտէի ուսուցչա-
կան դպրանոցի Ֆրէսկէան բաժնի տեսչուհին,
որը քաղաքի մէջ յայտնի մանկավարժուհիներից
մէկն է հաշվում: Օրիորդը կարդում է յատկապէս
այդ կոնգրէսի համար պատրաստած իր տեղեկա-
գիրը, որը մի ամբողջ ծրագիր և ուղեցոյց է
պարտէզպանուհիների համար: Դրան հետեւում է
մի այլ ատենաբան, որը, ինչպէս առհասարակ
ընդունված է Ֆրէսկէան կոնգրէսներում, պէտք
է կէտ առ կէտ քննել առաջին տեղեկագիրը,
ցոյց տալ նրա թոյլ և լաւ կողմերը: Այնուհետեւ
տեղի ունեցան վիճարկանութիւններ, որոնց մաս-
նակցում էին բաւական մեծ թուով ատենաբաններ:
Այնքան միւս տեղեկագիրն և վիճարկանութիւննե-
րին, որոնք աւելի մասնաւոր, նեղ մանկավարժա-

Ուրեմն նախկին 766 ր. 23 կ. հետ այժմ ունենք 870 ր. 29 կոպէկ:

Այսօր, սեպտեմբերի 20-ին, յանձնեցինք:
1) Թիֆլիս, Բարեգործական ընկերութեան խորհրդին, գաղթականներին և աղքատներին նպաստելու համար 100 բուրլի:

2) Էջմիածին, Վեհափառին 100 բուրլի, յօգուտ գաղթականների և սովեակների:

Մեզ մօտ մնում է 670 ր. 29 կ:

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 9189 ր. 11 կ:

Ուղարկել ենք 8519 բուրլի:

ՃԻՇԻ ԹԻՆԻՐ

Մեզ ուղարկված են հետևեալ ձեռք տեղեկութիւնները, որ մենք տպագրում ենք, իբրև մի ուղարկութեան արժանի ապացոյց, թէ ինչ կարծիք ունեն իրանց գիւղացիք՝ զինու վրա հարկ նշանակելու մասին: Այս տեղեկութիւնները վերաբերում են Ղազան գաւառի Բարան գիւղին: Ահա.

«Տեղեկանալով լրագիրներէր, որ կառավարութիւնը մտադիր է հարկ նշանակել զինիներէ վրա, կամենում ենք մի քանի խօսք ասել այդ մասին, առաջ բերելով այն չնչին օգուտը, որ ստանում ենք Ղազան գաւառի Բարան գիւղի բնակիչներս մեր այգիներէր:

- 1) Վերջին 5 տարվայ ընթացքում մեզ մօտ մէկ դեսեատին խաղողի այգիներ արժէ 150 ր.:
- 2) Այգիների մշակումը մեզ մօտ դեռ ևս կատարվում է նահապետական եղանակով և մէկ դեսեատինից ստացվում է 135 վեդրօ գինի:
- 3) Եթէ ուղղակի արդիւնաբերողից գնեն գինին, վեդրօն կարծենայ 30 կօպ:
- 4) Մէկ դեսեատին այգու համար արքունական հարկ ենք վճարում 3 ր. 60 կօպ:
- 5) Իւրաքանչիւր մի դեսեատին այգի մշակելու համար տարեկան հարկաւորվում է 70 մշակ. եթէ իւրաքանչիւր մշակի համար օրական հաշւենք 40 կօպ, այն ժամանակ մշակման վարձ կը լինի 28 ր., սրա վրա աւելացնելով 5 ր. որպէս վարձ կարասիների և գործիչների՝ ընդամենը կը լինի 33 բուրլի:
- 6) Գիւղացիք և առհասարակ մանր արդիւնաբերողները շատ քիչ դէպքում են գինի վաճառում, այն էլ իրանց հարեանների վրա փոքր քանակութեամբ, իսկ մնացած մեծ մասը իրանք են խմում:
- 7) Մի դեսեատինից ստանալով 135 վեդրօ գինի և վեդրօն վաճառելով 30 կ., արդիւնք կը լինի 40 ր. 50 կ. սրանից դուրս գալով 33 ր. որպէս այգու մշակման և կարասիների վարձ և 3 ր. 60 կ. էլ որպէս արքունական հարկ, կը մնայ

կան բնաւորութիւն ունէին, խօսել դրանց մասին ևս մեզ շատ հեռու կը տանէր. մենք կանգ կառնենք միայն երկու առաջին տեղեկագրերի վրա:

Որ. Վիսայայի տեղեկագիրը, ինչպէս ասեցինք, մի մանրամասն, ընդարձակ ծրագիր է: Օրիորդը նախ անում է ֆրեօքէլեան դպրոցի պատմութիւնը: Ազգային կրթութեան նպատակը, շարունակեց նա, կարելի է ամփոփել այսպէս.—կազմել մի հասարակութիւն, այսինքն մի ընկերակցութիւն եղբայրների՝ միացած հոգեկան առաջին տպաւորութիւններով, որ նրանք միասին ստանում են դպրոցական նստարանների վրա: Օրիորդը առաջ է բերում Շանինից հետեւալը. «Կատարելագործել մարդուն, դա կը նշանակէ տալ նրան ազատութիւն, լայնացնել, ընդարձակել նրա միտքը, նրա զգացմունքները, նրա կամքը»: Ազգային կրթութիւնը, չնչնից օրիորդը, հասարակական բարենորոգման ամենամեծ միջոցներից մէկն է:

Ապա նա սկսում է քննել մանկական պարտեզները ֆիզիքական, մտաւոր և բարոյական տեսակէտից: Մանկան ֆիզիքական զարգացման համար ֆրեօքէլեան դպրոցները մեծ յարմարութիւններ են ներկայացնում: Մտաւոր կողմը քննելու օրիորդը չնչնում է, որ հարկաւոր չէ մեր փոքրիկներին աշակերտ դարձնել, մի և նոյն ժամանակ չը պէտք է մոռանալ, որ նրանք չունենալով աշակերտների պէտք է դառնան, խուսափելով այս երկու հակառակ ծայրայեղութիւններից, հարկաւոր է ընտրել միջին ուղղութիւնը: Երրորդ կէտը.—բարոյական կրթութիւնը: Նկատենք հէնց այստեղ, որ մանկական դպրոցների այդ կողմը մինչև վերջին ժամանակներս տեղի է տուել բաւական վիճարկութիւններ: «Վարժուհու օրը»

դուտ արդիւնք 3 ր. 90 կօպէկ մի դեսեատինից:

8) Եթէ ենթադրված հարկը նշանակվի զիւղական և առհասարակ մանր գինեգործութեան վրա, այն աղքատները կունենան, որ գիւղացին աւելի լաւ կը համարի այգին ոչնչացնել և նրա տեղը վարելահող դարձնել, քան թէ այդքան ծախսի հետ էլ հարկ վճարել այն այգու համար, որից ստացած գինին դորձ է ածու միայն որպէս տանու խմիչք, առանց մի կօպէկի ծախելու:

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՅ

Սեպտեմբերի 9-ին

Մօսկվայի ստուար հայ կոյճիւնիսն եթէ այսօր ունի հասարակական ցաւեր, այդ ցաւերից մէկն էլ նրա մէջ բուն դրած եսամոլորն են: Գրանց հետ վերջին ժամանակներս սկսել է կուռել հասարակութեան բանիմաց, անկախ մտածող մասը: Սակայն եսով կուրացածները, ոտքի տակ տալով ժողովրդի իրաւունքները, արհամարհելով ընդհանուրի ձայնը, առանց կարմրելու, շարունակում են իրանց սխաղործութիւնները...

Ձեռքից չեն ուղում թողնել ոչ երկցիփոխութիւնը, ոչ այստեղի Գասպարեան անկեղանոցը, ոչ հասարակական այս ու այն գործերի զեկավարութիւնը: Այդ մարդիկ համարեալ գոռով հասարակութեան ներկայացուցիչներ են հանդիսանում, ամեն գործի մէջ ուղում են անպատճառ առաջինը լինել, ամեն մի խնդրի մէջ փոխանակ մի ձայնի՝ քսան ձայն ունենալ:

Մօսկվայի հայերի մէջ տիրող հասարակական աղմուկներն ու խռովութիւնները նոր չեն. նրանք սկսվել են 8—10 տարի առաջ: Եւ ինչն էլ եղել այդ խռովութիւնների սկզբնապատճառը.—ի հարկէ, այս ու այն մեծամիտ աղայի ետը: Բայց օրինակներով խօսենք: Աղաների ետն էր միակ պատճառը, որ Մ. Փանեանի պէս մի հմուտ, օրինակելի երեցիփոխ և հասարակութիւնից արնքան յարգված անձը, իր բազմամեայ արդիւնաւոր ծառայութիւնից յետոյ՝ սիրտը կտորած հեռացաւ հասարակական պաշտօնից, ապարելը թողնելով եկեղեցու և հասարակութեան հետ ոչ մի բարոյական կապ չունեցող անապատներին: Եւսն է պատճառը, որ մօտ անցնելում հայոց եկեղեցում քաղցրաւոր երգող լաղարեան ձևաբանի աշակերտներից կազմված երգչեկի խումբը այսօր էլ չէ երգում և այդ խմբին այժմ փոխարինել է անծայր «կիլլաց» մի տիրացու: Եւսն է պատճառը, որ Գասպարեան անկեղանոցի պէս մի համակրելի և լայն ծրագրով հիմնարկութեան գլուխ են անցած այնպիսի պատաւաւոր պարոններ, որոնք անկեղանոցի 70 հազարի հասնող զորամասը լիով մի քանի դուր

նակը.—ահա այն բարոյական դասը, որ մանուկ կարող է ստանալ մանկական դպրոցում: «Մանուկը ոչինչ չի հասկանայ, շարունակում է Շօր. Վիսայան, բիրբիական միտքեղակ պատմութիւններով, որեւէ յիմարութիւն և և վերին աստիճանի միասակար մտնել մանկան գլուխը այդտեսակ պատմութիւններ և սաղմոսներ: Զրոյց, երգ, ոտանաւոր,—ահա միակ կրօնական ծրագիրը մանկական պարտեզների համար:

Այս տեղեկագիրը ընդունվեց բուռն ծափահարութեամբ:

Սրան հետեւում է Լօզանի ուսուցչական դասընթացի տեսուչ պ. Գէի տեղեկագիրը: Պարոնը քայլ առ քայլ հետեւելով առաջին տեղեկագրի մէջ յարուցած հարցերին, մեծ հմտութեամբ առաջ տարաւ նրա ճիշտութիւնը, ընդարձակելով, առանձնապէս չնշտելով նրա մի քանի կարեւոր կէտերը: Ի միջի այլոց նա ասաց մօտաւորապէս հետեւեալը.—«Ուղիղն ասած, կարելի է քիչ բուռնացնելով մեր միտքը, գրեթէ հաստատել, որ մանկական պարտեզը մի անհրաժեշտ չարիք է: Այստեղ մենք չօգտւում ենք ողջ խնդրի նուրը կողմը:—Փոքրիկ մանուկը ստեղծված է իր մօր մօտ մնալու. վերջինս աւելի լաւ, քան ամենաբարեկամային վարժուհին, աւելի լաւ, քան ամենակրթութեամբ մանկավարժը, ընդհանակ է առաջ տանել առաջին կրթութիւնը: Մանկանք իր սկզբնական տարիներում հարկաւոր է կնոջ հոկոգութիւնը, կնոջ փափկութիւնը, նրա համբերութիւնը, նրա անձնուրիշութիւնը, նրա ըմբռնողական նրբութիւնը և նրա աշխոյժը: Բայց իսկոյն և եթ ասենք, թողնել մանկան իր մօր մօտ, դա ներկայ հասարակական դրութեան մէջ մի անիրագործելի իդէալ է: Շատ սակաւ է այ-

պառաւ են միայն պահում և մի քանի կօպէկ էլ, իբրեւ բարեկործութիւն, սրան նրան տալիս: Վերջապէս մի մէկն ասենք...

Այս տարի, ապրիլի 3-ին, հասարակութիւնը պէտք է նոր երեցիփոխի և «Եկեղեցեաց խորհրդի» մի քանի նոր անդամների ընտրութիւն կատարէր: Ընտրութեան օրը մեծ բազմութիւն էր հաւաքված Գասպարեան անկեղանոցի դահլիճում: Ներկայ էին ամեն հասակաւոր մարդիկ: Ընտրութիւնները կատարվեցին: Ընտրվեցին նոր երեցիփոխ և մի քանի նոր անդամներ. բայց որովհետեւ նորընտիր անդամները ինտելիգենտ երիտասարդներ էին և հին երեցիփոխն էլ փառաւորապէս սեւեալաւ, այդ պատճառով մի խումբ «պատաւաւորներ» սկսեցին սարսափել զոռօքոց բարձրացնել, որ իրանց ետը այդպէս ջախջախել էր... Իսկ գտնվեցին մի քանի թուլամորթներ, որոնք այդ զոռօքոցից վախեցած, բողբոջեցին ընտրութիւնների դէմ և արդեցիքն բեկանել տալ:

Այժմ նոր ընտրութիւններ են նշանակված սեպտեմբերի վերջերին:

Ա. Մատուրեան

ՆԱՄԱԿ ՍՍՍՎՐՈՊՈԼԻՅ

Սեպտեմբերի 11-ին

Սեպտեմբերի 4-ին տեղի ունեցաւ այստեղի յայտնի հարուստ Մկրտիչ Դիւլիզեանի թաղումը: Թաղման չքեղութեան համար հանդուցեալի եղբայրը ոչինչ չէր խնայել. Նոր-Նախիջևանից հերբաւրված էին Նիքիւմ և Միխիլար վարդապետները, որոնցից առաջինը հիւանդութեան պատճառով չէր եկել, և երկու քահանայ:

Մկրտիչ Դիւլիզեանը դեռ երիտասարդ էր, 37 տարեկան. ընդամենը 4 տարի է, որ նա ստացել է իր հօբեդրօրից մօտ 800,000 ր. ժառանգութիւն: Հանդուցեալի մեծ եղբայրը տեսնելով որ եղբայրը մեռաւ, չանկելով ոչ մի աչքի ընկնող բարեգործութիւն, ի յիշատակ իր եղբոր արեց հետեւեալ նուիրարեութիւնները:

Էջմիածնին՝ 5000 բուրլի, Մտավորապի հայոց եկեղեցուն՝ 10,000 բուրլի, 5-ական հազար բուրլի ուսուցչ հետեւեալ ուսումնարաններին՝ Օլգեան և Ալեքսանդրեան օրիորդաց դիմնադրանքներին, քաղաքային ուսումնարանին և ապաստարանին, ուրեմն ընդամենը 20,000 ր., խոստացաւ հայոց ծխական երկսեռ ուսումնարանների համար նոր չէնք կառուցանել, որոշելով դրա համար 30,000 ր., խոստացաւ և շուտով ուղարկելու է «Մշակի» խմբագրատուն 1000 ր. յօգուտ սովեակների, բացի այդ խօսքը նուիրարեութիւններից, 200 բուրլի տուեց եկեղեցու վերանորո-

ւոր այն երեկանների թիւը, որոնք կարող են ստանալ այդ սկզբնական կրթութիւնը ընտանիքում: Մանկական պարտեզն է, որ պիտի բռնի ընտանիքի տեղը: Քէյը նոյնպէս կանգ է առնում կրօնական հարցի վրա, նա նոյնպէս ընդգէմ է. «L'est trop matin» (այդ շատ վաղ է) չեղում է նա: Տեղեկագիրը վերջանում է մի քանի եղբայրացութիւններով, որոնք առանձին թերթերի վրա տեղված, բաժանած էին հասարակութեան մէջ:

Առաջ բերեց այդ եղբայրացութիւններից մի քանի կարեւորները:

1) «Մանկական պարտեզը կամ դպրոցը ընտանիքի պատկերն է, բայց մեծացած. նա մի յատուկ միջնակայն է, որը պէտք է իր գիրկն առնէ փաթեթի մանկան ամեն կողմից, այդպէս մանուկը պէտք է զարգանայ իրան յագեցնելով շրջակայ առարկաներից՝ ընտրված, ջոկված նրա համար այնպէս, ինչպէս ընտրում են մի ծաղիկ մի պարտիզի միջից».—Այստեղից է և մանկական պարտեզը անունը:

2) «Մանկական դպրոցը մի հիմնարկութիւն է, ուր մանկան ֆիզիքական զարգացումը պէտք է լինի աւելի և աւելի հոգացողութեան առարկայ, ուր մանկան մտաւոր կողմը պիտի զարգացնել զգուշութեամբ, չափաւորութեամբ, ուր մանկան պէտք է քիչ քիչ ընտելացնել գործի, աշխատանքի, ոչ թէ մի օր և ից և սովորեցնել, անտեսական նպատակով, այլ իդէալական»:

3) «Մանկական դպրոցը մի հիմնարկութիւն է, ուր ուսուցանել՝ այդ բառի սովորական նշանակութեամբ, գրեթէ պէտք է արդելված լինի, ուր իմացականութիւնն է աղբուր մանկական մաքի որոշումների վրա,—գործունէութեան կրթիչ ուսուցման առաջին պայմանը, մանկական և բոլոր

գութեան, պատուիրեց եկեղեցու համար երկու լաւ վառարաններ 500 բուրլի արժողութեամբ, 5 աղքատ ընտանիքների համար որոշեց ամսական 3-ական բուրլի, որ այսուհետեւ մշտապէս պէտք է ստանան. թաղման օրը 400 աղքատներին հաշտուեց և մօտ 200 ր. բաժանեց, ծխական ուսումնարանների բոլոր աղքատ երեխաների համար պատուիրեց հագնելիք, մի աղքատ աշակերտուհի իր հաշուով գինեաղիւս տուեց: Բացի այս բոլորից, Կարապետ Դիւլիզեան խոստանում է ձեռքից եկածի չափ ուրիշ բարեգործութիւններ, երբ իր գործերը կարգի կը բերի:

Պ. Դիւլիզեանը ամեն ինչ անում է ուրախութեամբ. երբ նրան հոգարարութիւնը և ուսուցչները առաջարկեցին նոր ուսումնարան շինել, նա ուրախութեամբ յանձն առաւ և ասեց. «Հնորհակալ եմ, որ ինձ առաջարկում էք անել մի այդպիսի բարեգործութիւն. ես միանգամայն ընդգէմ լինելով իմ հօբեդրօրը, որ իր ահագին կարողութիւնը Մտավորապի վաստակելուց յետոյ, ոչ մի բան չարեց Մտավորապի համար, այժմ ինձ համար քաղցր պարտականութիւն եմ համարում՝ գոնէ Մտավորապի համար յաւերժացնել նրա յիշատակը. պատրաստ եմ միշտ ուժիցս եկած օգնութիւնը անել»:

Հանդուցեալին թաղեցին եկեղեցու բակում. դադար վրա դրված էին պատկերազարդանքներ, հայ հասարակութեան և ուսումնարանի կողմից: Հոգարարութիւնը, համաձայն եղբոր ցանկութեան, որոշեց, որ ամեն տարի ուսուցչական խումբը աշակերտներ և աշակերտուհիներին հետ հոգեհանգիստ կատարի հանդուցեալի վրա, որը թաղվեց կառուցանելի ուսումնարանի դիմացը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Սեպտեմբերի 18-ին, կիրակի օր, տեղի ունեցաւ Մարդիս քահանայ Բէշադարեանցի թաղումը: Դեռ նախորդ օրը, հանդուցեալի մարմինը, բազմաթիւ հասարակութեան ուղեկցութեամբ, իր բնակարանից տեղափոխեցին Քառանցի եկեղեցին, որտեղ նա քահանայ էր Պատարազ մատուցանելուց և կրօնական բոլոր արարողութիւնները կատարելուց յետոյ, ժամը 12-ին քահանաների դասակարգը դադար դուրս բերեց եկեղեցուց: Թէ եկեղեցին, թէ եկեղեցու բակը և թէ նոյն իսկ Գլօրցօվայա փողոցը լի էր ահագին, արտասովոր բազմութեամբ, որ եկել էր իր վերջին յարգանքը մատուցանելու յարգված քահանայի յիշատակին: Հոգեկրականներից ներկայ էին միայն մօտ 25 քահանայ և կոնսիստօրիայի անդամ Համադասազ վարդապետը,

միւս դպրոցների բարձր նպատակը:

Այս տեղեկագիրը ևս ընդունվեց բուռն ծափահարութեամբ:

Այնուհետեւ օկուլում են վիճարկութիւնները: Ատենաբանները համարեալ թէ բոլորը համաձայն են տեղեկագրերում արձարած հարցերի հետ: Վիճարկութիւններին մասնակցեց ի միջի այլոց և 60 տարվայ մանկավարժական փորձի տէր մի դաւաճանալ ծերունի Երկչոտ, անվստահ ձայնով նա առաջարկում է մտցնել մանկական պարտեզների մէջ կրօնական տարրը:

Հէնց նրա խօսելու ժամանակ կարելի էր եղբայրացնել թէ նա ինչ տպաւորութիւն պիտի գործէր, նկատվում էին շատերի զլխի շարժմամբ: Այդ պայմանում անհամաձայնութեան նշանները Մարդիսին հետեւում է Նիւշապետի գինեաղիւսի տեսչի աղբուր և կենդանի ճառը. նա պարզ կերպով ցոյց է տալիս այն ցաւալի հետեւեալը, որը առաջ է դալիս կրօնի դաստաւորութիւնից մանկական այդ նուրը հասակում:

Կոնգրէսի նիստից յետոյ տեղի ունեցաւ ճաշ, որին մասնակցում են մօտ 230 կօնգրէսիստներ: Ճաշից յետոյ նաւով մի պտոյտ գործեցին Նիւշապետը լծի վրա, բոլորն էլ ուրախ, զուարթ: Երկչոտ, սեպտեմբերի 10-ին, երկվորուդու կայաները լի էր. ծիծաղ, քրքիչ, կենդանութիւն էր տիրում ամեն կողմ: Գնացեցները մէկը միւսի ետեւից դալիս, անցնում էին իրանց հետ տանելով կօնգրէսիստների խմբերը դէպի Շէկցարիայի զանազան քաղաքներ, գիւղեր, ուր պարտիզպանութիւններ ոյժ, գործութիւն, նոր եռանդ ստացած, պիտի շարունակեն ժողովրդի կրթութեան գործը:

Ս. Շխանց

որը կատարեց օժան հանդէսը և քարոզ-
խօսեց: Յաջորդաբար խոսեցին Գրիգոր
Երեմիայի, Ներսիսեան զարդի, աշակերտները, ա-
պա քահանայները, որոնք և իրանց ձեռքի
վրա մինչև գերեզմանատուն տարան պաշա-
ղը, և ապա խուռն բազմութիւն, որոնք թէ
ոտով և թէ կռքով հետեւում էին դադարին: Միջին-
փողոցում և Հաւաքարում անգլիկ բաղնիքներ էր
դուրս եկել տեսնելու այդ տխուր հանդէսը: Հան-
գուցեալ թաղիկը խօշկաւորուած, Բաքիի գերեզ-
մանի մօտ: Գերեզմանի վրա դրվեցին հինգ պատկ-
ներ՝ մէկը Ներսիսեան զարդի հողաբարձութեան
կողմից, միւսը ուսուցչական խմբի կողմից, եր-
րորդը աշակերտների կողմից: Երկու պատկ-
էլ Սերպիէի օրիորդական գիմնազիայի կող-
մից, ուր հանգուցեալը ուսուցիչ էր՝ մէկը ա-
շակերտուհիների, միւսը ուսուցիչների կողմից:
Թաղական հանդէսը վերջացաւ մօտ ժամը 3-ին:
Չնայ կարող չարձանագրել հետեւեալ ուրախա-
լի փաստը: Թաղական օրը Քամոյեանց եկեղեցու
ծխականներից շատերը դիմում են եկեղեցու ե-
րէցիկութիւն: Մեկը՝ Վարդգէսեանին՝ առաջարկելով
եկեղեցու փողոցը 300 բուրձի յատկացնել
թաղական համար, պայման դնելով, որ եթէ ծխա-
կանները ընդհանուր ժողովը չի ընդունի այդ
ծախքը, իրանք դիմումները իրանց վրա կուտեն:
Մենք համոզված ենք, որ ծխականների ժողովը
մեծ համակրութեամբ կը վերաբերվի այդ առա-
ջարկին, ի նկատի ունենալով, որ Բեդարեան
մեռաւ. առաջադիւն է վիճակի մէջ, թողնելով
մեծ ընտանիքը:— 3 աղիւն և 3 աղայ, բոլորն էլ
փոքրիկ: Հանգուցեալը մի քանի ամիս առաջ
պարտքով գնեց մի տուն, սակայն այդ տան հետ
միասին նա ունի մեծ պարտք, և տունը էլ գրաւ
է դրած, այնպէս որ նրա ընտանիքի վիճակը
միանգամայն անապահով պէտք է համարել:
Յանկայի է, որ Ներսիսեան զարդի էլ իր կող-
մից մի նպաստ տալ հանգուցեալի ընտանիքին,
իբրև փոքրիկ վարձատրութիւն նրա 25-ամեայ ու-
սուցչական գործունէութեան:

Երկ, սեպտեմբերի 19-ին, ժամը 2-ին, տեղա-
պահ Ներսիսեան զարդի պաշտօնը կոմիտեան
կառավարչապետ զինաբալարիտանտ Շերմետե-
վին և նրա օգնական կոմս Տաթևիչեվին:

Հաջորդ օր, սեպտեմբերի 17-ին, Նահապետ
վարդապետ Նահապետեան ներկայացաւ Կովկա-
սեան կառավարչապետին, կաթողիկոսական յանձ-
նարարութեամբ:

Թագաժառանգ Յէսարէվիչն առաջիկայ պսա-
կաբութեան առիթով, կայսրութեան ամեն
կողմից բազմաթիւ խնդիրներ են ուղարկված
Բարձրագոյն անունով: Այս օրերս, Թիֆլիսի պո-
լիցմէյստերի վարչութիւնը Պետերբուրգից ասացել
է մօտ 200 խնդիրներ, որ Թիֆլիսեցիները ու-
ղարկել են Պետերբուրգ, տեղեկութիւններ հաւա-
քելու խնդրատուների ընտանեկան դրութեան
մասին: Այդ տեղեկութիւնները պէտք է ուղար-
կեն մինչև հոկտեմբերի կէսը:

Մեզ հաղորդում են, որ Ժընէվի արևելադէս-
տերի ժողովում, ի միջի այլոց մի գեկուցում է
արել Յակոբ Մեղաւորեան, հայոց ընտանեկան-
ամուսնական սովորութիւնները մասին:

Ներսիսեան զարդի ուսուցչական խումբը այս
տարի մնացել է նոյնը, ինչ որ անցեալ տարի
էր, որովհետև հին հողաբարձութիւնը իր հետե-
նալուց մի քանի օր առաջ պայման կապեց բո-
լոր ուսուցիչների հետ, և վարձեց նրանց մի տա-
րով: Հին ուսուցիչներից մի քանիսը իրանց կամ-
քով հեռացան և տեղափոխվեցին Եւթիմանի ձե-
մարանը: Պակաս ուսուցիչների փոխարէն հրա-
ւիրված են հետեւեալ նոր ուսուցիչները՝ աստուա-
ծաբան Գաղապեան, որ Ներսիսեան զարդի
հաշով ուսում է առել Գերմանիայում, և հրա-
ւիրված է հին հողաբարձութեան օրով, Գարբիէ
Միլոյեան, զարդի նախկին ուսուցիչը, Եղիշէ
Մաղաթեան, որ անցեալ տարի ուսուցիչ էր ձե-
մարանում, և պատրաստականների համար՝ Տիգ-
րան Գրիգորեան:

Սրանից մի քանի օր առաջ Եւթիմանից, Վե-
հապետ Կաթողիկոսը ուղարկել է մի հեռագիր
Թիֆլիսի առաջնորդին, որի մէջ յայտնում է, թէ
ինքն տեղեկացել է, որ զարդի հողաբարձութիւնը
արձակուում է հին ուսուցիչ ինքնին, ուս-
տի պատուիրում է առաջնորդին յայտնել հողա-

բարձութեանը, որ ուսուցիչներին չար-
ձակեն մինչև դաւ տարի: Թիֆլիսի առաջ-
նորդն էլ, իր կողմից, ինչպէս մենք լսում ենք,
այդ հեռագիրը պաշտօնապէս հաղորդել է հողա-
բարձութեան ի տեղեկութիւն և ի կատարումն:
Գրաւ հետ միասին առաջնորդը հեռագիրով պա-
տասնակցել է Վեհապետին, թէ կաթողիկոսական
հեռագիրը հաղորդվեց հողաբարձութեան, և ուսու-
ցիչները ցուցակը կուղարկվին: Առաջնորդի այդ
պատասխանի մէջ չէ ասված, որ Վեհապե-
տին հասած տեղեկութիւնները ճիշդ չեն,
սուտ են: Ուստի առաջնորդը ուղարկեց Վեհա-
պետին մի երկրորդ հեռագիր, որի մէջ յայտ-
նում է, որ հին ուսուցիչները բոլորն
էլ մնում են իրանց պաշտօնում, որ ասել
է թէ Եւթիմանի ուղարկված տեղեկութիւնները
չի՞նձու են:

Կովկասի կառավարչապետի առաջարկութեամբ,
Սերբուրգ և սահմանների վրա գաղթական շար-
ժումը կարգաւորելու համար, ներքին գործերի մի-
նիստը իրական կից կազմված յանձնաժողովը
այս աշնան կը քննի այն հարցը, որ ցանկալի է
ուսուցչականները գաղթեցնել Ղուբայի գաւառի,
Անդրկասպեան շրջանի և Պարսկաստանի սահ-
մանագծի վրա եղած գիւղերը:

Սեպտեմբերի 8-ին համեստ կերպով տօնվեց
Գայանեան օրիորդաց զարդի գոյութեան 25-ա-
մեակը:

Գրում վրա ակցիլ գնելու հարցը քննելու հա-
մար գինեգործների համագումար ժողովի նիս-
տերը Պետերբուրգում կը սկսվեն հոկտեմբերին:

Թաւրիզից գրում են «Հաւիտ» շաբաթաթեր-
թին. «Այս օրերս հայոց առաջնորդը ներկայացաւ
Թագաժառանգին, դայադապին, քարտուղարին և
Գերբիէ, Հաֆիզեանի և գաւառական ուրիշ քա-
ղաքների մասին մանրամասն պատմելուց յետոյ
խնդրեց նրանց աշխուրջ ուղարկութիւնը, որոնց
մասին թէ հեռագրով և թէ խնդրով դիմել է Հա-
հին, խնդրելով նրա ամենաազդեղ անօրինո-
ւթիւնը»:

Ճողովդական լուսաւորութեան միւնիստրու-
թիւնը մօտերս մի առաջարկութիւն է արել պե-
տական խորհրդին, որով պէտք է վերադիւր
Թիֆլիսի նահանգի Գորի քաղաքի ուսուցչական սե-
մինարիայի հայ-լուսաւորական դաստիարակեան
կրօնաւարների պետական (չառախի) պաշտօնը:

Արտասահմանում արևելեան գործուած-
նեքի մեծ պահանջ լինելու պատճառով, Պարիզի
վաճառականների մի խումբ, ինչպէս հաղորդում
են Պետերբուրգի լրագրիչները, ուղարկեց հաւա-
տարմատորներ Կովկաս, Բուխարա, Խիվա և
Ախալ-Տեկի վերջինեւ գործուածները պատկ-
րելու համար:

Տեղական ռուս լրագրիչները հաղորդում են, որ
երկրագործութեան միւնիստրը Սոխում հասա-
նակութեան 14-ին, երեկոյեան 8 ժամին Նրան
գիմաւորեցին իշխանութեան և քաղաքի ներ-
կայացուցիչները: Հետեւեալ օրը, առաւօտեան 8
ժամին, միւնիստրը ընդունեց խնդիրները գիւղա-
պահը ընկաւ Յէրէլէաս Սեպտեմբերի 17-ին, երե-
կոյեան 5 ժամին, քաղաքի ներկայացուցիչները
և տեղական իշխանութիւնները ճաշ տուցին մի-
նիստին, իսկ երեկոյեան 7 ժամին միւնիստրը
ճանապարհ ընկաւ դէպի Բաթում: Սեպտեմբերի
18-ին, երեկոյեան 8 ժամին, երկրագործութեան
միւնիստրը հասաւ Բաթում:

Սուրբ գիրքը Ռուսաստանում տարածող ընկե-
րութիւնը, մայրաքաղաքի լրագրիչների խօսքերով,
մտադրութիւն ունի զանազան տեղերում նոր
պահեստներ բանալ, սուրբ գիրքը ժողովրդի մէջ
տարածելու նպատակով:

ՕԴԵՍՍԱՅԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 9-ին,
ստաւոտեան, այստեղի աւետարանականների հի-
ւանդանոցում, անաշտ օպերացիայի պատճառով
մեռաւ Վիկենայի ուսանող Աբրահամ վարդապետ-
րիկեան, 23 տարեկան հասակում: Նա ալեքսանդ-
րովցի էր: Սրանից մօտ 3 տարի առաջ աւար-
տելով Բազուրի բնակարան զարդը, ուղարկվում
է Վիկենայ՝ բարձրագոյն ուսում ստանալու: Յայտ-

նի չէ ինչ պատճառով, նա օգոստոսի վերջերին
հայրենիք վերադառնալիս՝ իջնում է Օդէսայի
«Յէնտրալ» հիւրանոցը, ինչպէս ծառաները և
տնտնողները պատմում են, բոլորովին առողջ:
Երկու օրից յետոյ նրա ոտի վրա բացվում է մի
փոքրիկ վերք: Այդ ժամանակ հիւրանոցում գտն-
ված բժիշկը, Մերից օպերացիայով, կտրում
է այդ վերքը, որից և առաջանում է արեան
վարակում: Բժիշկը տեսնելով, որ պացիէնտի բա-
նը վատ է, նրան փոխադրել է տալիս հիւանդա-
նոցը, որտեղ անաշտ համարելով Մերիցի օպե-
րացիան, նորից օպերացիա են անում, որից երե-
րասարգը, անաշտի տանջանքների մէջ, առանց
ծնողների և ազգականների խնամքի, օտար տե-
ղում մեռնում է: Հնորհակալ պէտք է լինել Մե-
րիցի օպերացիայի ներկայացուցիչ Մուրա-
դեանից, որի չնորոշի խեղճ ուսանողի դիակը գո-
նէ անյայտութեան չը մասնակցէ: Այդ պարտի
կարգադրութեամբ, հայոց եկեղեցում պատարագ
անելուց յետոյ, 16-ի չափ հայ ուսանող երիտա-
սարդների և վաճառականների ուղեկցութեամբ,
սեպտեմբերի 12-ին տեղի ունեցաւ յուղարկում
Գաղաթի վրա գրված էր երկու պատկ: Հանգու-
ցեալը յայտնի էր ինչպէս շատ անկեղծ և դար-
գացած մարդ:

ՅԻՄԵՆՆԱՅԻՆ հայոց եկեղեցական-ծխական զըգ-
րցի հողաբարձութիւնը խնդրում է մեզ տպել
հետեւեալ. «Հողաբարձութիւնը չնորհակալութիւն
է յայտնում Արշակ Մատուրեանին, որ մեր
զարդին ընծայեց 30 բուրձ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԼՈՒՐԵՐ ՍԱՍՈՒՆԻՑ

Սասունի և Մուշի դէպքերի ակնատեսներից
մէկը, որ այնտեղից դուրս է եկել օգոստոսի
26-ին, մի նամակով մեզ հաղորդում է հետեւեալ
տեղեկութիւնները:

«Մուշից դէպի Սասուն տանող ճանապարհի
վրա մի կամուրջ կար, որտեղից անցնելով հեշ-
տութեամբ կարելի էր բարձրանալ Սասուն: Այդ
կամուրջը, նախնիցից տարիների կռիւների ժա-
մանակ, սասունցիները քանդել էին, որպէս զի
կտրեց թշնամու ճանապարհը և դժուարացնեց
իրանց մօտ բարձրանալը:

Թիւրքաց կառավարութիւնը օգոստոս ամսի
սկզբներին սկսում է նորոգել յիշեալ կամուրջը,
սասունցիք իմանալով այդ, դալիս հաւաքում են
և չեն թողնում, որ կամուրջը նորոգվի: Ահա
այդ ժամանակ սկսվում է առաջին կռիւը սա-
սունցիների և թիւրքերի մէջ, որի ժամանակ բա-
յանվում են տասից աւելի թիւրքեր, իսկ մնա-
ցածները փախչում են զանազան կողմեր: Այդ
դէպքից յետոյ կառավարութիւնը զգալով իր
թուլութիւնը, այլ ևս զօրք չէ ուղարկում սա-
սունցիներին դէմ, այլ զօրք է նրանց դէմ
քիւրդ աշխարհիկներին: Վերջիններս զանազան կող-
մերից հաւաքվելով, անաշտի բազմութեամբ գը-
նում են սասունցիներին վրա, բոլորովին բնաջինջ
անելու նպատակով և ընդմիջում վերջ տալու այն
խռովութիւններին և անբաւականութիւններին,
որ նրանք առաջ են բերում Հաղարից աւելի
կարգին զինված վայրենի քիւրդեր դիմում են
դէպի Սասուն:

Աւելորդ է ասել, որ ճանապարհորդին պատա-
հած ամեն մի հայ դիւր, ամեն մի հայ ընտանիք
թաւանակում են նստակայ էլ լինում վրաւարանքի,
տանջանքի և բարբարոսութիւնների:

Այդ վայրենի հրօսակը քանի զնում բազմա-
նում և հազարներ է համարում: Ամեն մի դաշ-
տեցի հայ կարծում էր, թէ վերջացած է Սասու-
նի բանը, կարծում էին, թէ բարբարոսները հիմ-
նադրական կանխ ամբողջ Սասունը, մանաւանդ
Տաթևիկը՝ Սասունի հողին: Բայց այդ անգամ ա-
մենք էլ սխալվեցին: Երբեք չէին կարող երեւա-
կայել այն, ինչ որ կատարեցին սասունցիները:

Գաշտեր, լեռներ բոլորը բռնված էին բարբա-
րոս քիւրդերով: Նրանք բոլորն էլ շտապում էին
ժամ առաջ հասնել այնտեղ, որ կատարեն իրանց
գործը:—Ապանել, գերել, թաւանել և հիմնադրա-
նալ այն բոլոր տեղերը, որ բնակվում են սա-
սունցիները: Վերջապէս մօտենում են Սասուն
անառիկ լեռներին, որոնք տարիներից ի վեր ա-
կանառես են եղել անկարագրելի բռնութեան,

յափշտակութեան, ճնշումների, և դրա հետ միա-
սին կատարել գիմաւորութեան:

Իսկ ինչ է անում այդ օպերիս սասունցի հայը,
ինչ է մտածում նա: Գիտէ արդեօք թշնամու չար
գիտաւորութիւնը, նրա թիւը: Գիտէ արդեօք թէ
անա մօտենում զինված և զրգոված քիւրդ ամ-
բոյնը. ունի արդեօք այնքան պաշար, որ կարո-
ղանայ դիմադրել, ինչ են անում դաշտեցի հայե-
րը. օգնում են արդեօք սասունցիներին այդպիսի
կրիտիքական բազմեցում. անա մի շարք կարևոր
հարցեր, որոնց պատասխանը վերին աստիճանի
հետաքրքրական է.—Այ՛ո, սասունցին գիտէ ա-
մեն ինչ, նա սովորել է իր գոյութեան համար մը-
տածել: Նա գիտէ իր դրութիւնը, գիտէ որ թիւը
քերը և քիւրդերը ամեն ջանք գործ են դնում նը-
րան ոչնչացնելու: Այ՛ո, այդ բոլորը նա գիտէ: Զգում
է նմանապէս, որ ինքը թոյլ է. զգում է, որ եթէ
այդ դրութիւնը երկար շարունակվի, նրան օգ-
նութեան չը հասնեն, նա բոլորովին ուժասպառ
կը լինի, կը ոչնչանայ թէ Սասունը և թէ սա-
սունցի հայը: Նա քաղցած է, հաց չունի, կանա-
չով, թանով է իր օրերը անցկացնում: Իսկ դաշ-
տեցիների օգնութեան մասին առ այժմ հարց
չէ կարող լինել, որովհետև նրանք աւելի վատ
պայմանների մէջ են ապրում:

Հէնց որ քիւրդերը մօտենում են սարերին, յան-
կարծ լավում է մի ձայն և դնախները կարկու-
տի նման սկսում են տեղալ թշնամու բանակի
վրա: Մինչև որ քիւրդերը ուշքի են գալիս, բանը
արդէն բանից անցնում է: 600-ից աւելի սպանված
և վրաւորված մարդիկ ընկնում են Սասու-
նի լեռների ստորոտներում, իսկ միւսները փախ-
չում են փախչող քիւրդերից մի քանիսը պատմում
էին, որ այնտեղ, Սասունում, հայերը միայնակ չեն,
նրանց մօտ ուրիշ աղբիւրից մարդիկ կան, եթէ ոչ
նրանք այդպէս չէին կարող իրանց յաղթել և կո-
տորել: Այս դէպքի մասին իսկոյն իմաց տրվեց Եր-
զրումի և Բազմիշի կուսակալներին, որ զօրք ուղարկ-
վի Սասուն: Մուշից ուղարկվեց 250-ից աւելի զին-
ւոր երկու թնդաթիւով, Բազմիշից նոյնքան, երեք
թնդաթիւով, իսկ Երզրումից ահապին զօրք, երեք
թնդաթիւով: Զօրքերը չբազմապատում են Սասունը
և նորից սկսվում է կռիւը:

Խնուսի կողմերի բոլոր հեռագրական թիւերը
կտրված են. ո՞վ է կտրտել, յայտնի չէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հոռոյն «Ստեֆանի» գործակալութեանը
հեռագրում են, որ իտալական կառավարութիւնը,
գնեւրալ Միլլիի գեկուցման հիման վրա, թէ ամ-
բողջ Սիբիրից և կարող վերականգնված է, հրա-
մայեց դէնքը վերադարձնել ազգաբնակչութեանը,
որ իրված էր նրանից պաշարման դրութեան ժա-
մանակ:

—Ֆրանսիական լրագրիչները տեղեկութիւններ
են ստացել Մաղաբաշխից, որ այնտեղ շատ
զրգոված են Ֆրանսիացիների դէմ և պատրաստ-
վում են պատերազմի: Մաղաբաշխի աղգար-
նակութեան այդ տրամադրութեան պատճառով,
Ֆրանսիացիները շատ վտանգւում են համա-
րում իրանց դրութիւնը կղզու վրա:

—Եւրօպացիների դրութեան մասին Չինաստա-
նում անմիջապէս լուրեր են պտտում: Գնալու
նիս ամսին չինացիները յարձակում գործեցին Ֆը-
րանսիական միսիայի վրա Տաթևիկում, Կանտոնի
մօտ: Կողմացեցին 28 տներ և մատուռ, բռնու-
թիւններ գործ դրին ազգաբնակչութեան վրա:
Եթէ չինական իշխանութիւնները իրանք կամե-
նային պաշտպանել Եւրօպացիներին, նրանք միշտ
կարող էին նախազգուշական միջոցներ ձեռք
առնել, որովհետև ապստամբները մի քանի օր
առաջ չբարձրականներով ապստամբութեան են
հրաւիրում տեղական ազգաբնակչութիւնը և մինչև
անգամ նշանակում են օրը և ժամը:

—«Figaro» լրագրի Սեֆիայի թղթակիցը ա-
սում է, որ Բազմիշի ներքին դրութիւնը այ-
նու ամենայնիւ երկրիւ է պատճառում կառավա-
րութեանը և կարգի ու հանգստութեան կուսա-
կիցներին: Եթէ Լուրերին հաւատալ, պրինց Ֆեր-
դինանդ հանգիստ չէ զգում իրան, որովհետև նը-
րա միւնիստրները ժողովրդի վստահութիւնը չեն
վայելում: Ասում են, որ պրինցը և միւնիստրները
գիմում են բոլորական հողաբնակչութեանը
և նրա օգնութիւն են խնդրում:

